ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սվետլանա Կամոյի Ջիլավյանի **«Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ս.Կ. Ջիլավյանի ատենախոսությունը նվիրված է արդի քաղաքական գիտության և անվտանգության կառավարման ոլորտի կարևորագույն հիմնահարցերից մեկին՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ուսումնասիրությանը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից միջազգային և տարածաշրջանային անվտանգության միջավայրի փոփոխություններով, ռազմական բախումների աճող ազդեցությամբ, ինչպես նաև ժողովրդավարական կառավարման համակարգերում բանակի և քաղաքացիական ինստիտուտների փոխհարաբերությունների վերաիմաստավորման անհրաժեշտությամբ: Հատկապես Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրինակով իրականացված համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքացիական վերահսկողության տարբեր մոդելների առանձնահատկությունները և դրանց արդյունավետության աստիճանը:

Ատենախոսության հեղինակը թեման ներկայացնում է տեսական և կիրառական բավարար հիմնավորվածությամբ՝ համադրելով քաղաքական գիտության, անվտանգության ուսումնասիրությունների, իրավաքաղաքական վերլուծության և ռազմաքաղաքացիական հարաբերությունների վերաբերյալ առկա գիտական մոտեցումները: Աշխատանքն առանձնանում է հարուստ աղբյուրագիտական բազայով, միջազգային և ազգային փորձի համադրմամբ, ինչպես նաև համեմատական վերլուծության կիրառմամբ:

Ատենախոսին հաջողվել է լուծել իր առջև դրված հիմնական հետազոտական խնդիրները, մասնավորապես.

- Ուսումնասիրել բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տեսական հիմքերը և դրանց դերը համապարփակ անվտանգության համակարգում՝ ընդգծելով պետության, բանակի և քաղաքացիական հասարակության փոխազդեցությունը:
- Վերլուծել ՀՀ-ում քաղաքացիական վերահսկողության համակարգի ձևավորման օրենսդրական և ինստիտուցիոնալ նախադրյալները:
- Բացահայտել Հայաստանի պաշտպանական ոլորտում առկա մարտահրավերները և գնահատել բարելավման հնարավոր ուղիները:
- Ուսումնասիրել ՌԴ-ում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընթացակարգերի առանձնահատկությունները և դրանց իրականացման մեխանիզմները:
- Ուսումնասիրել ՌԴ-ի բազմաստիճան անվտանգային համակարգը և դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը:
- Իրականացնել Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգերի համեմատական վերլուծություն՝ ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը:
- Առաջարկել կոնկրետ բարեփոխումներ՝ հիմնված ռազմաքաղաքացիական հարաբերություններում ռազմավարական հավասարակշռության (ՌՔՀՌՀ) մոդելի և ուղղված երկու երկրներում քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ներառյալ օրենսդրական փոփոխություններ և անկախ վերահսկողական մարմինների ներդրում:

Հեղինակը փորձ է կատարել համադրելու ռազմաքաղաքացիական հարաբերությունների դասական մոտեցումները Հայաստանի և Ռուսաստանի քաղաքական համակարգերի առանձնահատկությունների հետ, ինչպես նաև առաջարկել է քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք գործնական մոտեցումներ:

Ատենախոսությունն առանձնանում է իր կիրառական նշանակությամբ: Աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել պաշտպանության և անվտանգության ոլորտի քաղաքականության մշակման, օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացներում:

Միաժամանակ, ատենախոսությունը զուրկ չէ նաև որոշ բացթողումներից ու թերություններից: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

1. ՀՀ և ՌԴ համեմատությունը հետաքրքիր է, սակայն կոնցեպտուալ հարց է առաջանում՝ արդյո՞ք սա «մոտ դեպքերի» (most similar systems) համեմատություն է, թե՞ «տարբեր համակարգերի» (most different systems): Երկու պետություններն ունեն տարբեր չափս, միջազգային դերակատարում, ռազմական ներուժ, քաղաքական համակարգեր: Փոքր պատերազմող պետության (ՀՀ) և մեծ ռազմական դերակատարի (ՌԴ) համեմատությունը ենթադրում է տարբեր ռազմաքաղաքական մշակույթների համեմատական վերլուծություն: Հետևաբար անհրաժեշտ է մեթոդաբանական հստակ հիմնավորում, թե ինչու հենց այս երկու դեպքերն են ընտրված և ինչ տեսական վարկած է ենթարկվում ստուգման:
2. ՀՀ և ՌԴ դեպքերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների բնույթը ուղղակիորեն կախված է քաղաքական ռեժիմի տիպից: Նպատակահարմար կլիներ ներմուծել «քաղաքացիական վերահսկողություն ավտորիտար/հիբրիդ/ժողովրդավարական միջավայրում» ենթահասկացություններ՝ ցույց տալով, թե ինչ սահմանափակումներ է ստեղծում իշխանության կենտրոնացումը վերահսկողական մեխանիզմների արդյունավետության համար: Առանց ռեժիմային վերլուծության վերահսկողության մեխանիզմները դիտարկվում են իբրև ինքնուրույն գործոններ, ինչը մեթոդաբանորեն կոռեկտ չէ: Անհրաժեշտ էր սահմանել հիմնական փոփոխականները (քաղաքական ռեժիմ, ինստիտուցիոնալ ինքնավարություն, քաղաքացիական կարողություն, ռազմաքաղաքական մշակույթ և այլն): Առանց հստակ փոփոխականների սահմանման համեմատական վերլուծությունը վերածվում է նկարագրության:

3. Առաջին գլուխը նվիրված է քաղաքացիական վերահսկողության տեսական հիմքերին, սակայն չի երևում՝ արդյոք աշխատանքը հենվում է հստակ տեսական դպրոցների վրա: Ցանկալի է հստակեցնել՝ աշխատանքը որ տեսական հարացույցի շրջանակում է տեղակայվում (նեոլիբերալիզմ, կոնստրուկտիվիզմ, նեոինստիտուցիոնալիզմ և այլն), արդյո՞ք առաջարկվում է նոր դասակարգում, թե կիրառվում է առկա մոդելների ադապտացում ՀՀ և ՌԴ դեպքերի նկատմամբ:
4. Ատենախոսությունում ներկայացված են մի շարք բարեփոխումների առաջարկություններ, այդ թվում՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման վերաբերյալ, սակայն դրանց գործնական իրագործելիության և կազմակերպչական, ինստիտուցիոնալ ու քաղաքական ռիսկերի ու առավելությունների գնահատումը ներկայացված չէ բավարար խորությամբ:
5. Ատենախոսության հեղինակը հենվում է իրավական ակտերի, պաշտոնական փաստաթղթերի և տեսական աղբյուրների վրա, սակայն հետազոտության էմպիրիկ բաղադրիչը համեմատաբար սահմանափակ է: Մասնավորապես, աշխատանքը կշահեր, եթե հեղինակն իրականացներ փորձագիտական հարցազրույցներ պաշտպանության ոլորտի պատասխանատուների, ռազմական կառավարման ներկայացուցիչների կամ իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչների հետ: Նման առաջնային էմպիրիկ նյութի ներգրավումը հնարավորություն կտար ոչ միայն տեսականորեն նկարագրել քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, այլև գնահատել դրանց գործնական արդյունավետությունը և առկա խնդիրները՝ անմիջական մասնագիտական փորձի հիման վրա:

Այնուամենայնիվ, նշված թերությունները չեն նվազեցնում Սվետլանա Կամոյի Ջիլավյանի **«Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում»** թեմայով ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» (քաղաքական

գիտություններ) մասնագիտությամբ գիտական աստիճանի հայցելու համար առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ռուս-Հայկական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր

Վահե Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոս՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի գիտական քարտուղար

բ.գ.թ. Ռ. Կասաբաբովա

08.06.2026 թ.